# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«14» հունիսի 2019 թվականի N 10

## ՍԻՄԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Սիմա Հակոբյանի դիմումը՝ կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարի տեղակալ Սիմա Հակոբյանի և Մուսալեռ համայնքի ղեկավարի միջև 2019 թվականի փետրվարի 14-ին անորոշ ժամկետով կնքած թիվ 1 աշխատանքային պայմանագիրը 2019 թվականի հունիսի 14-ից համարել լուծված:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին (Լուսինե Ալեքսանյան) սահմանված կարգով իրականացնել վերջնահաշվարկ:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հունիսի 14
գ. Մուսալեռ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ**
**ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**


Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22


# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«26» հունիսի 2019 թվականի N 11

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ «ՄՈՎՍԵՍ ՏԵՐ-ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1239-Ն որոշումը և հաշվի առնելով ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի «Մովսես Տեր-Գալուստյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Խաթուն Հակոբյանի դիմումը՝ *կարգադրում եմ.*

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի «Մովսես Տեր-Գալուստյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Խաթուն Հակոբյանին հուլիսի 1-ից տրամադրել իրեն հասանելիք 2019 թվականի արձակուրդը՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Խաթուն Հակոբյանին աշխատանքի մեջ համարել 2019 թվականի օգոստոսի 6-ից:
3. Աշխատանքային պարտականությունները դնել դաստիարակ Լուսիկ Սաֆարյանի վրա:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հունիսի 26
գ. Մուսալեռ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շաղ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«5» հունիսի 2019 թվականի N 21

## ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 111-Ն որոշումը՝ որոշում եմ.

1. Սույն թվականի հունիսի 8-ին կայանալիք «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում իրականացվող համապետական շաբաթօրյակի կազմակերպման, արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ նյութեր և պարագաներ ձեռք բերելու նպատակով տրամադրել 15 000 (տասնհինգ հազար) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հունիսի 5
գ. Մուսալեռ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ**
**ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» հունիսի 2019 թվականի N 22

## ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇԸ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Մուսալեռ համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 6-ի հերթական նիստի N 13 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գտնվող 04-069-028-002 ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի բաժանման հատակագծի առանձնացվող 0,0425 հա հատվածին տալ հետևյալ հասցեավորումը՝ Շառլ-Տիրան Թեքեյան փողոց, թիվ 2/8, իսկ մյուս՝ 0.0425 հա հատվածի հասցեն թողնել նույնը՝ Երիտասարդական փողոց, թիվ 53:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հունիսի 10
գ. Մուսալեռ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22


### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» հունիսի 2019 թվականի N 23

### ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇԸ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Մուսալեռ համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 6-ի հերթական նիստի N 13 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գտնվող 04-069-0033-0012 ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի բաժանման հատակագծի առանձնացվող 0,0394 հա հատվածին տալ հետևյալ հասցեավորումը՝ Գ. Լուսավորիչ փողոց, թիվ 16/1, իսկ մյուս՝ 0.0387 հա հատվածի հասցեն թողնել նույնը՝ Գ. Լուսավորիչ փողոց, թիվ 16:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հունիսի 18
գ. Մուսալեռ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» հունիսի 2019 թվականի N 24

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գտնվող գյուղատնտեսական վարելահողը /ծածկագիր՝ 04-069-153-002/ ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջներով, որոշում եմ.

1. Քաղաքացի Ռոզա Վարդգեսի Զաքարյանին սեփականաշնորհված 04-069-153-002 ծածկագրով 0,24 հա մակերեսով գյուղատնտեսական վարելահողի ավել օգտագործվող 0,0047 հա հողամասը հատկացնել նրան:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հունիսի 18
գ. Մուսալեռ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamayng@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» հունիսի 2019 թվականի N 25

### ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇԸ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Մուսալեռ համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 6-ի հերթական նիստի N 13 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գտնվող 04-069-0027-0021 ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի բաժանման հատակագծի առանձնացվող 0,0266 հա հատվածին տալ հետևյալ հասցեավորումը՝ Տիգրան Մեծի 8-րդ փողոց, թիվ 2/1, իսկ մյուս՝ 0.0264 հա հատվածի հասցեն թողնել նույնը՝ Տիգրան Մեծի 8-րդ փողոց, թիվ 2:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հունիսի 21
գ. Մուսալեռ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» հունիսի 2019 թվականի N 26

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ Լ. ԴԱՎԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Լ. Դավթյան փողոցի թիվ 1 հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը /ծածկագիր՝ 04-069-0061-0012/ ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, գույքի իրավունքի գրանցումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ղեկավարվելով նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջներով, որոշում եմ.

1. Քաղաքացի Մարկոս Հարությունի Թովմասյանին սեփականաշնորհված 04-069-0061-0012 ծածկագրով 0,089 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքի ավել օգտագործվող 0,0016 հա հողամասը հատկացնել նրան:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հունիսի 24
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հունիսի 2019 թվականի N 27

## ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇԸ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Մուսալեռ համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 6-ի հերթական նիստի N 13 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գտնվող բնակավայրերի հասարակական կառուցապատման 0.002 հա մակերեսով հողամասին տալ հետևյալ հասցեավորումը՝ Լ. Դ. դյու Ֆուրնեի փողոց, թիվ 31/1:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հունիսի 26
գ. Մուսալեռ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ Տիրան Թեքեյան 2/1
Էլ փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6 47 22

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հունիսի 2019 թվականի N 28

## ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇԸ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Մուսալեռ համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 6-ի հերթական նիստի N 13 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գտնվող համայնքի սեփականությունը հանդիսացող 0.00735 հա մակերեսով բնակավայրերի այլ հողին տալ հետևյալ հասցեավորումը՝ Լ. Դ. դյու Ֆուրնեի փողոց, թիվ 27/1:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քննումման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2019 թվական, հունիսի 26
գ. Մուսալեռ